նել իր գործած գուլպաների երկրորդ ջուխտը, որ պատրաստել էր վանահօրն ընծայելու, որպէսզի նա իրան յիշէ իր աղօթքների մէջ:

Այդ բոլորը կատարւում էր խիստ ջերմ եւ բարեպաշտական ոգեւորութեամբ:

Տխուր էր միայն Մարգարիտը, — այդպէս էր Հասսօի կնոջ անունը, — նա չէր կարողանում համբերել, որ Մարօն եւ Խաթունը ուխտ էին գնում, իսկ ինքը մնում էր: Ինչո՞ւ չէին թողնում նրան, միթէ՞ նա հոգի չունէր, միթէ՞ նա չէր ուզում վանքի սրբութիւնները համբուրել: Վերջապէս նրան եւս պէտք էր որսորդի փակուած խրճիթից դուրս գալ եւ արձակ աշխարհ տեսնել: Մարօն կապը կտրած հորթի նման, ուր որ ասես, գնում էր, բայց ինքը պէտք է տանից դուրս չգայ, նրա համար, որ Մարօն դեռ աղջիկ էր, իսկ ինքը՝ հարս... Երեւի այսպէս էր մտածում Մարգարիտը, երեւի, այսպէս էր բողոքում նրա լռութեան դատապարտուած լեզուն իր սրտի խորքում:

Եւ իրաւ, հայ ընտանիքի մէջ խիստ տարբեր էր հարսի եւ դեռ չամուսնացած աղջկայ վիճակը: Աղջիկը վայելում էր բաւականին ազատութիւն: Նա, ում հետ ուզում էր, խօսում էր. նա կարող էր ոտքը շատ հեռու դուրս դնել հօր տան շեմքից, գնալ դրացիների տները, գնալ արտը, դաշտը, ուր որ ուզում էր ման գալ, ի հարկէ, պահպանելով համեստութեան բոլոր պատշաճը: Նրա երեսը ծածկուած չէր քօղով, եւ լեզուն արձակ էր: Իսկ այն օրից, երբ նա նշանուեցաւ մէկի հետ, նա իր բոլոր յարաբերութիւնները կտրում էր դրսի աշխարհի հետ. նա դառնում էր իր տղամարդի սեփականութիւնը. նրա աշխարհը լինում էր ամուսնի տան չորս պատերը: Նրա բերանը փակւում էր. ոչ ոքի հետ խօսելու իրաւունք չունէր, նրա երեսը ծածկւում էր թանձր քօղով, ոչ ոքին ցոյց տալու իրաւունք չունէր: Նա ապրում էր իր ամուսնի համար, որպէս նրա ծածկեալ եւ վարագուրուած սրբութիւնը, որի ներսը նայելու օտար ոք կարող չէր:

Այս վիճակի մէջն էր գտնւում խեղճ Մարգարիտը:

Իր փակուած դրութիւնը յարուցել էր նրա մէջ նախանձի նման մի բան դէպի ուրիշների ազատութիւնը, դէպի Մարօն, որ դեռ մանուկ աղջիկ էր, եւ դէպի պառաւ Խաթունը, որ կեանքի համար անպիտանացած էր: Մանկութեան եւ զառամութեան — երկու հակառակ ծայրեր, որոնք աւելի չէին ենթարկւում ընտանեկան խստութիւնների պահանջներին:

Նոյն աւուր երեկոյեան պահն էր, որի միւս առաւօտը մենք պէտք է ճանապարհ ընկնէինք դէպի վանքը: Ես գնացել էի ախոռատունը ձիս նայելու եւ պատանի Ատոյին — դա Մըհէի օգնականն էր — պատուիրելու, որ Մարօի